



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

« 19 » 02 2018թ.

No 06/3-4/7961-18

Ձեր No _____

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՄՁ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ
ԱՍՈՑԻԱՑԻԱ» ՀԿ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ

ՊԱՏՃԵՆԸ՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ ՓՈՔՐ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ
ՀԱՐԿԱՅԻՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ-ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ ՊԱՐՈՆ Ռ. ՄԱՇԱԴՅԱՆԻՆ

ՀՀ ԿԱ ՊԵԿ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ
ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ
ՊԱՐՈՆ Վ. ՍԻՍԱԿՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 22.01.2018թ.
թիվ Պ-02 գրության

Հարգելի պարոն Համբարձումյան

Հիմք ընդունելով ՀՀ հարկային օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասը և 307-րդ հոդվածը, իրազեկման կարգով հայտնում ենք հետևյալը:

«Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածին համապատասխան՝ օրենքը կարգավորում է արժույթային գործարքները, արժույթային գործարքներ իրականացնող անձանց գործունեությունը ՀՀ-ում: Հետևաբար, արտարժույթով իրականացվող գործարքների (գնանշում, վճարում) նկատմամբ օրենքով կիրառվող սահմանափակումները (մասնավորապես՝ օրենքի 6-րդ և 7-րդ հոդվածներ) վերաբերում են ՀՀ տարածքում իրականացվող գործարքներին:

Օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան՝ ռեզիդենտները ՀՀ տարածքից դուրս կարող են առանց սահմանափակումների իրականացնել արժույթային գործարքներ՝ օտարերկրյա պետությունների օրենսդրությանը համապատասխան:

ՀՀ տարածքում ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների միջև իրականացվող գործարքների (այդ թվում՝ ծառայությունների մատուցման) գնանշումների և փողային վճարումների կատարման ընթացակարգերը և առանձնահատկությունները սահմանված են «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 5-րդ, 6-րդ, 7-րդ հոդվածներով: Մասնավորապես, անհրաժեշտ է հաշվի առնել, որ ՀՀ տարածքում անկանխիկ վճարումներ նախատեսող և գրավոր ձևով կնքված պայմանագրերում գնանշումները, ինչպես նաև դրանց անկանխիկ վճարումները կարող են իրականացվել նաև արտարժույթով, եթե այդ գործարքները իրականացվում են (պայմանագրերը կնքվում են) իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող ռեզիդենտի և իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող ոչ ռեզիդենտի միջև:

ՀՀ ԿԱ հարկային ծառայության պետի 11.10.2005թ. «Հայաստանի Հանրապետությունում արժութային արժեքներով գործարքների իրականացման վերաբերյալ» N3 պաշտոնական պարզաբանման՝

- 2-րդ կետին համապատասխան՝ «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի իմաստով «ՀՀ տարածք» հասկացությունը համապատասխանում է «Պետական սահմանի մասին» ՀՀ օրենքով տրված հասկացությանը, այն է՝ ՀՀ տարածքը աշխարհագրական իմաստով նշանակում է ՀՀ տարածքը ՀՀ պետական սահմաններում, ներառյալ ներքին ջրերը, որոնց նկատմամբ տարածվում է ՀՀ իրավասությունը, ինքնիշխան իրավունքները և հարկային օրենսդրությունը՝ միջազգային իրավունքի և ՀՀ օրենսդրությանը համաձայն,

- 5-րդ կետին համապատասխան՝ Օրենքի իմաստով կարևոր չէ, թե վճարումը որտեղ է իրականացվում, այլ կարևոր է, թե ինչպիսի գործարքի դիմաց է կատարվում վճարումը (օրինակ՝ եթե գործարքը կատարվում է երկու ռեզիդենտների միջև ՀՀ տարածքում, ապա վճարումը կանխիկ կամ անկանխիկ պետք է կատարվի ՀՀ դրամով, եթե նույնիսկ վճարման ենթակա գումարը հաշվեգրված է օտարերկրյա բանկում այդ ռեզիդենտների բանկային հաշիվներին),

- 7-րդ կետին համապատասխան՝ ռեզիդենտների միջև իրականացվող գործարքները համարվում են իրականացված ՀՀ տարածքում, եթե բացակայում են հիմքեր դրանք դիտելու ՀՀ տարածքից դուրս իրականացրած: Մասնավորապես, եթե ռեզիդենտների միջև առևտրային պայմանագիրը (ապրանքների մատակարարում, ծառայությունների մատուցում, աշխատանքների կատարում) կնքված է ՀՀ տարածքից դուրս, ապա այդ պայմանագրում գնանշումները կարող են կատարվել արտարժույթով (անկախ այն հանգամանքից, թե պայմանագրից բխող գործարքները փաստացի կատարվելու են ՀՀ տարածքում կամ ՀՀ տարածքից դուրս), իսկ այդպիսի եզրա-

կացություն անելու հիմքերի բացակայության դեպքում պայմանագիրը համարվում է կնքված ՀՀ տարածքում և, հետևաբար՝ այդ պայմանագրում գնանշումները պետք է կատարվեն ՀՀ դրամով:

Նշված մոտեցումը, կիրառելի է նաև ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ հարաբերություններում, երբ տեղի է ունենում «ապրանքների (ծառայությունների, աշխատանքների) արտահանում»:

Հաշվի առնելով վերը նշված իրավական կարգավորումները՝ հայտնում ենք, որ եթե ՀՀ ռեզիդենտ կազմակերպության և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց միջև հյուրանոցային ծառայությունների մատուցման պայմանագրերը փաստացի կնքվել են ՀՀ տարածքից դուրս, ապա նշված գործարքների գնանշումները և դրանց դիմաց վճարումները կարող են կատարվել նաև արտարժույթով (անկախ այն հանգամանքից, թե պայմանագրերից բխող գործարքները փաստացի կատարվելու են ՀՀ տարածքում կամ ՀՀ տարածքից դուրս): Եթե բացակայում են բավարար հիմքեր գրությամբ նշված պայմանագրերը ՀՀ տարածքից դուրս կնքված համարելու համար, ապա պայմանագրերը համարվում են կնքված ՀՀ տարածքում և, հետևաբար՝ այդ պայմանագրերում գնանշումները և դրանց դիմաց վճարումները պետք է կատարվեն ՀՀ դրամով:

Ինտերնետ կայքերը (ինտերնետ միջավայրը) չեն համարվում ՀՀ տարածք և հետևաբար, ինտերնետ կայքում հրապարակային առաջարկները, գովազդները կարող են կատարվել նաև արտարժույթով: Միաժամանակ, եթե ինտերնետ կայքերի միջոցով կատարված հրապարակային առաջարկի (օֆերտայի) ընդունումը (ակցեպտը) հաճախորդի (ֆիզիկական անձի) կողմից ևս կատարվում է ինտերնետ կայքի միջոցով, և բացակայում է կողմերի միջև նշված գործարքին առնչվող ՀՀ տարածքում կնքված այլ պայմանագիր, ապա համարվում է, որ հրապարակային պայմանագիրը կնքվել է ՀՀ տարածքից դուրս, հետևաբար այդ գործարքի դիմաց վճարումները կարող են կատարվել նաև արտարժույթով:

Տեղեկացնում ենք նաև, որ ՀՀ տարածքից դուրս կնքված պայմանագրերի գնանշման և դրանց դիմաց փողային վճարման մասով անհրաժեշտ է հաշվի առնել օտարերկրյա պետության օրենսդրությամբ սահմանված առանձնահատկությունները (սահմանափակումները):

Ինչ վերաբերում է գրությամբ նշված գործարքների փաստաթղթավորմանը, հարկ է նկատի ունենալ հետևյալը:

Օրենսգրքի 56-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը և նոտարը ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման և (կամ) ծառայության մատուցման գործարքների մասով պարտավոր են դուրս գրել Օրենսգրքով սահմանված համապատասխան հաշվարկային փաստա-

թղթեր: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հաշվարկային փաստաթղթերը դուրս են գրվում էլեկտրոնային եղանակով, բացառությամբ՝

1) հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոնի, ինչպես նաև այն հաշվարկային փաստաթղթերի, որոնցում պարունակվում է գաղտնիք համարվող և (կամ) սահմանափակ օգտագործման ենթակա տեղեկատվություն.

2) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած դեպքերի, երբ հաշվարկային փաստաթղթերը կարող են դուրս գրվել ՀՀ կառավարության սահմանած կարգով:

Միաժամանակ, հաշվարկային փաստաթղթերի դուրսգրման կարգը սահմանված է ՀՀ կառավարության 05.10.2017թ. «Հաշվարկային փաստաթղթերի դուրսգրման, անվավեր ճանաչման, չեղարկման կարգը և ոչ էլեկտրոնային եղանակով հաշվարկային փաստաթղթերի դուրսգրման դեպքերը սահմանելու մասին» N1257-Ն որոշմամբ:

Հաշվի առնելով վերոնշյալ իրավակարգավորումները, հայտնում ենք, որ գրությամբ նշված դեպքում ծառայություն ստացող ֆիզիկական անձի անունով էլեկտրոնային եղանակով պետք է դուրս գրվեն հաշվարկային փաստաթղթեր: Ընդ որում, «e-invoicing» համակարգում նախատեսված է, որ հաշվարկային փաստաթղթերում արժեքային մեծությունները լրացվում են ՀՀ դրամով:

Միաժամանակ, օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան հաշվարկային փաստաթուղթ (էլեկտրոնային եղանակով և ՀՀ դրամի նշումով) լրացնելուց բացի, անհրաժեշտության դեպքում կարող է կազմվել նաև թղթային փաստաթուղթ՝ արտարժույթի նշումով:

Հարգանքով՝



Վ. ՄԻՐՈՒՄՅԱՆ